ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

___ « _____ » 2025թ. N __ -Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 95-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» N 95-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները.

2) Որոշման 1-ին կետի 3.5-րդ ենթակետի «ֆունկցիոնալության խորը և ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձանց,» բառերից հետո ավելացնել «կամ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում (3-րդ խմբի հաշմանդամություն) ունեցող անձանց՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապով,» բառերը.

3) Որոշման 1-ին կետի 4.5-րդ ենթակետի «ֆունկցիոնալության խորը և ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձանց,» բառերից հետո ավելացնել «կամ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում (3-րդ խմբի հաշմանդամություն) ունեցող անձանց՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապով,» բառերը.

4) Որոշման 1-ին կետի 5.5-րդ ենթակետի «ֆունկցիոնալության խորը և ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձանց,» բառերից հետո ավելացնել «կամ ֆունկցիոնալության

միջին աստիճանի սահմանափակում (3-րդ խմբի հաշմանդամություն) ունեցող անձանց՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապով,» բառերը.

5) Որոշման 1-ին կետի 6.5-րդ ենթակետի «ֆունկցիոնալության խորը և ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձանց,» բառերից հետո ավելացնել «կամ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում (3-րդ խմբի հաշմանդամություն) ունեցող անձանց՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապով,» բառերը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2025 թվականի ապրիլի 10-ից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 95-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում (3-րդ խմբի հաշմանդամություն) ունեցող անձանց համար ՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապով, ևս սահմանել անվճար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջիններս իրենց առողջությունը և բարեկեցությունը նվիրել են հայրենիքի պաշտպանությանը, ինչպես նաև հաճախ դժվարանում են կայուն և լավ վարձատրվող աշխատանք գտնել իրենց առողջական վիճակով պայմանավորված, հետևաբար տրանսպորտային ծախսերից նրանց ազատելը կօժանդակի նրանց լիիրավ ինտեգրմանը հասարակության մեջ: Զինվորական ծառայության հետ պատճառական կապով պայմանավորված ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում (3-րդ խմբի հաշմանդամություն) ունեցող անձանց համար անվճար տրանսպորտի տրամադրումը կլինի համայնքի կողմից նրանց ծառայության գնահատման ձև:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 95-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆ